

## Արձանագրություն 2

«ԵՏ-ՇՀԱՊԶԲ-15/1-2» ծածկագրով մրցույթի ընթացակարգի  
հայտերի բացման նիստի

ք. Երևան

09.12.2016թ.  
ժ.10:00

Մասնակցում են՝

Նախագահ - Ե.Խաչիբաբյան  
անդամներ - Ա.Աբգարյան  
Ա.Մամիկոնյան

### Հայտերի բացման մասին

1. Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ 19020000 (տասնինը միլիոն քսան հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

2. Հրավերով սահմանված ժամկետում և սահմանված պահանջներին համապատասխան գնային առաջարկություն է ներկայացրել «Ֆլեշ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Ե.Կողբացու 30) և «Մաքսիմ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Տպագրիչների 8):

3. Երկու մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները համապատասխանում են «ԵՏ-ՇՀԱՊԶԲ-15/1-2» ծածկագրով մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման՝ բացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Քվեարկություն՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Մասնակիցների ներկայացրած ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը և առաջարկած գնման առարկաների տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին գնահատվել են որպես համապատասխանող (ճիշտ):

Քվեարկություն՝ կողմ - 3, դեմ - 0:

5. Մասնակիցների առաջարկված գները (որի մեջ չի մտնում ԱԱՀ-ն) անհրաժեշտ միակ չափաբաժնի համար ներկայացված են ստորև աղյուսակում.

Չափաբաժին	Վառելիքի անվանումը, չափի միավորը և պահանջվող քանակը	«Մաքսիմ» ՍՊԸ	«Ֆլեշ» ՍՊԸ
1	Բենզին պրեմիում, 60000 լիտր	16 400 000	16 450 000

6. Քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցում են հախահաշվային գինը (19020000 դրամ, այդ թվում ԱԱՀ-ն), հանձնաժողովը որոշեց մասնակիցներին հրավիրել բանակցությունների, որը տեղի կունենա ս/թ դեկտեմբերի 12-ին ժամը 10-00-ին ք.Երևան, Լենինգրադյան 16 հասցեում:

Քվեարկություն՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի քարտուղար՝

անդամ

Ե.Խաչիբաբյան

Ա.Սահակյան

Ա.Աբգարյան

Ա.Մամիկոնյան